ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Արփինե Հովհաննիսյանի, Դավիթ Հարությունյանի, Նաիրա Կարապետյանի, Էդմոն Մարուքյանի և Կարինե Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-097-01.10.2012-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1-ին հոդվածով ընկերության ժողովի գումարման վայրը սահմանող դրույթներն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերը տիրապետող բաժնետերերի բնակության և ընկերության գտնվելու վայրի հասցեները շատ դեպքերում համընկնում են: Այդ առումով առաջարկում ենք որպես ժողովի գումարման վայր սահմանել ոչ թե ընկերության կանոնադրությամբ նշված այն կոնկրետ վայրը, որտեղ պետք է տեղի ունենա ընկերության ժո-

ղովը, այլ նախագծում նախատեսել դրույթներ, համաձայն որոնց ժողովը կարող է հրավիրվել միայն ընկերության գտնվելու վայրի բնակավայրի տարածքում: Նշված բովանդակությամբ լրացումը կարող է լիարժեքորեն ապահովել բաժնետերերի կողմից բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի պատշաճ իրականացումը:

Բացի դրանից, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջները, գտնում ենք, որ նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող լրացումն անհրաժեշտ է կատարել ոչ թե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածում, այլ ժողովի գումարման վայրի հետ կապված հարաբերությունները կարգավորող առանձին հոդվածով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հստակեցվում է բաժնետիրական ընկերության ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը, ինչպես նաև սահմանվում է, որ վերստուգող

հանձնաժողովի անդամ չեն կարող լինել բաժնետիրական ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձանց հետ փոխկապակցված անձինք:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը իրականացվել է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական ազդեցության կարգավորման տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,

բ) շահառուների վրա ազդեցության կարգավորման տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վայրին, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների անդամների՝ բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմիններում ընդգրկված անձանց հետ*

փոխկապակցված չլինելու դրույթների ամրապնդմանը և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության

գնահատման վերաբերյալ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխության չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-097-01.10.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների» մասին Հայաստանի Հանրապետության 2001թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի 73-րդ հոդվածի «ա» ենթակետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Ժողովի գումարման վայր է համարվում Ընկերության՝ կանոնադրությամբ սահմանված գտնվելու վայրը: Այլ վայրում ժողով կարող է գումարվել, եթե ժողովին ներկա են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի առնվազն 2/3-ը »:

Հոդված 2. Օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ պարբերությունը «չընդգրկված» բառից հետո լրացնել «եւ Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձանց հետ չփոխկապակցված» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող գործունեության առավել հստակ կարգավորման, բոլոր բաժնետերերի իրավունքների եւ օրինական շահերի իրականացման ապահովման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածը սահմանում է, որ բաժնետիրական ընկերության ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ

օրենքով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք, որոշում են ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը: Օրենքի 73-րդ հոդվածը, սահմանելով ժողովի նախապատրաստման կարգը, մանրամասն չի կարգավորում այն հարցը, թե մասնավորապես, որտեղ պետք է գումարվի ընկերության ժողովը, ինչը գործնականում առաջացնում է որոշակի խնդիրներ: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածը սահմանում է, որ ընկերության ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Միեւնույն ժամանակ կատարելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի վերլուծությունը, գալիս ենք այն եզրահանգման, որ ժողովում որոշումների մեծ մասը կայացվում են կամ ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, կամ ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ շատ հաճախ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 51 տոկոսին տիրապետող բաժնետերերի ներկայությունը բավարար է ժողովում որոշումներ կայացնելու համար: Ինչպես արդեն նշվել է, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում այն կոնկրետ վայր, որտեղ պետք է տեղի ունենա ընկերության ժողովը, ինչը հնարավորություն է տալիս ընկերության ժողովը գումարել ցանկացած վայրում, որտեղ ներկա են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի մի մասը: Այս հանգամանքը շատ հաճախ չարաշահումների հիմք է տալիս, քանի որ ժողովը կազմակերպվում է այնպիսի վայրերում, որտեղ մյուս բաժնետերերը չունեն օբյեկտիվ հնարավորություն նեկա գտնվել, ինչի արդյունքում որոշումները կայացվում են առանց նրանց մասնակցության: Սրանով որոշակիորեն սահմանափակվում է բաժնետերերի ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը: Այս պարագայում չարաշահումենրից խուսափելու համար առավել նպատակահարմար է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում սահմանել, թե որն է հանդիսանում ընկերության ժողովի իրականացման վայրը՝ մասանավորապես նշելով. «Ժողովի գումարման վայր է համարվում Ընկերության՝ կանոնադրությամբ սահմանված գտնվելու վայրը: Այլ վայրում ժողով կարող է գումարվել, եթե ժողովին ներկա են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի առնվազն 2/3-ը »:

« Բաժնետիրական ընկերությունների մասին » ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: «Բաժնետիրական ընկերությունների մասին » ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ընկերության վերստուգող հանձնաժողովը իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը, հետեւում է կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է ընկերության փաստաթղթերի համապատասխանությանը ՀՀ օրենքներին, այլ իրավական ակտերին, կանոնադրությանը: Հարկ է նշել, որ վերստուգող հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի ընկերության ֆինանսական հաշվետվական համակարգը լինի ճշգիրտ եւ ներկայացնի ընկերության ֆինանսական գործունեության իրական պատկերը: Վերստուգող հանձնաժողովը մեծ դեր է խաղում ընկերության ֆինանսական միջոցների սխալ տնօրինման, ընկերության տնօրենների խորհրդի, գլխավոր տնօրենի ու վարչության (տնօրինության) անդամների կողմից ժողովին կեղծ ֆինանսական տեղեկությունների ներկայացան կանխման գործում: Հաշվի առնելով վերստուգող հանձնաժողովի վերոնշյալ գործառույթները՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածը սահմանում է, որ բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձինք, այսինքն՝ վերստուգող հանձնաժողովի անդամ(վերստուգող) չեն կարող լինել ընկերության բաժնետերերը, տնօրենների խորհրդի կամ ընկերության գործադիր մարմնի անդամները: Վերոնշյալ դրույթը նպաստում է վերստուգող հանձնաժողովի առջեւ դրված խնդիրների իրականացմանը, սակայն այդ մարմնի գործունեության առավել արդյունավետության, թափանցիկության եւ օրինականության համար նպատակահարմար է սահմանել, որ վերստուգող հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ոչ միայն ընկերության

կառավարման մամիններում ընդգրկված անձինք,այլ նաեւ բաժնետիրական ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձանց հետ փոխկապակցված անձինք (ամուսինը, ծնողները, երեխաները, քույրերը եւ եղբայրները):

Կարգավորման նպատակը եւ ակնկալվող արդյունքը

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կնաստի բաժնետիրական ընկերությունների գործունեության հստակ կարգավորմանը, նրանց կողմից բոլոր բաժնետերերի շահերի զուգակցման հաշվառմամբ քաղաքականության իրականացմանը, բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի գործունեության արդյունավետության եւ օրինականության բարձրացմանը: